


Հայաստանի վիճակագրական համակարգի ակնարկ



Հայաստանի վիճակագրություն

Ընդհանուր տեղեկություն

Հայաստանի Հանրապետության վիճակագրական համակարգն ամբողջովին կենտրոնացված է և ֆինանսավորվում է պետական բյուջեից:

Հայաստանի վիճակագրական ծառայության հիմնական առաքելությունն է հավաքագրել և հրատարակել վիճակագրական տվյալներ կառավարության և հասարակության օգտագործման համար:


Հայաստանի վիճակագրական համակարգը բաղկացած է կենտրոնական ապարատից և վիճակագրության 11 մարզային գործակալություններից:

Ամփանումը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն

Բարձրագույն մարմինը՝ ՀՀ վիճակագրության պետական խորհուրդ

Ղեկավարը՝ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահը, որը միաժամանակ հանդիսանում է խորհրդի նախագահը

Ղեկավարը և խորհրդի մնացած 6 անդամները նշանակվում են Հանրապետության Նախագահի հրամանագրով՝ 6 տարի ժամկետով:




Հայաստանի վիճակագրություն

Դիրքը պետական կառավարման համակարգում

Վարչական դիրքը. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող մարմին է, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից: Այն պատասխանատու է վիճակագրական աշխատանքների ծրագրի շրջանակում սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրման համար:

Վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիրը հաստատվում է ՀՀ Ազգային ժողովի, իսկ դրա շրջանակում տարեկան ծրագրերը՝ Վիճակագրության պետական խորհրդի կողմից և ֆինանսավորվում՝ պետական բյուջեից:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կառավարման բարձրագույն մարմինը 7 անդամից բաղկացած Վիճակագրության պետական խորհուրդն է, որն իրավասու է ընդունելու վիճակագրության բնագավառին առնչվող նորմատիվ բնույթի իրավական ու ժ ու նեցող ակտեր:



Հայաստանի վիճակագրություն


Համառոտ պատմություն

Հայաստանի վիճակագրական համակարգը պաշտոնապես սկսել է գործել 1921թ., երբ ստեղծվել է Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը:

Մինչ 1990թ. Հայաստանի կենտրոնական վիճակագրության վարչության վիճակագրական աշխատանքն իրականացվել է ԽՍՀՄ կենտրոնական վիճակագրության վարչության անմիջական ղեկավարության ներքո: Սկսած 1990թ. Հայաստանի վիճակագրության վարչությունը անկախ կառավարական հաստատություն էր, կառավարության հսկողության ներքո, որը կրում էր լիակատար պատասխանատվություն հանրապետությունում վիճակագրական աշխատանքների կազմակերպման համար:

2000թ. ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը ձեռք է բերել հանրային շահին ուղղված գործառույթներ իրականացնող պետական մարմնի կարգավիճակ, որն իր խնդիրներն իրականացնելիս անկախ է այլ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից:

2008թ. ապրիլի 29-ին ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհրդի կազմակերպական նստաշրջանում ՀՀ-ն ընտրվել է ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովի նոր անդամ: Անդամակցությունը 4 տարի ժամկետով է՝ սկսած 2009թ. հունվարի 1-ից:



Հայաստանի վիճակագրություն

Իրավական հիմքերը.

- «Պետական վիճակագրության մասին» ՀՀ օրենքն՝ ընդունված 04.04.2000թ.,
- «Մարդահամարի մասին» ՀՀ օրենքն՝ ընդունված 12.10.1999թ.,
- «Գյուղատնտեսական համատարած հաշվառման մասին» ՀՀ օրենքը՝ ընդունված 27.11.2008թ.
- Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրերը.
 - Պետական վիճակագրական աշխատանքների եռամյա ծրագիր /օրենք/,
 - Պետական վիճակագրական աշխատանքների տարեկան ծրագիր (նորմատիվ գերատեսչական ակտ).

Վիճակագրության պետական խորհրդի որոշումները և այլ ազգային ու վերազգային նորմատիվային ակտերը:

Պետական վիճակագրական աշխատանքների ծրագրի կազմման սկզբունքները.

- առկա ռեսուրսների սահմանափակումները,
- վիճակագրական տեղեկություններ տրամադրողների վրա դրվող պարտականությունների ծավալը,
- ծախսերի արդյունավետությունը
- համադրելիությունը միջազգային վիճակագրական չափանիշներին
- երկարաժամկետ միջակայքում կայուն պարբերականությունը
- տարեկան կտրվածքով պետական վիճակագրությանը հատկացվող, ռեսուրսների հետ համաչափությունը,
- սպառողների պահանջարկի ուսումնասիրությունը:

(Պետական վիճակագրության մասին ՀՀ օրենքի 11-րդ հոդված)

Հայաստանի վիճակագրություն

Հիմնական գործառնությունները

վիճակագրական տվյալների հավաքագրում, մշակում, ամփոփում, վերլուծություն և հրատարակում, համագործակցություն համապատասխան պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հետ վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ոլորտում, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության մշակում և կատարելագործում, տեղեկատվության և տվյալների հավաքագրման համակարգում միջազգային ստանդարտների վրա հիմնված համընդհանուր դասակարգման և կոդավորման համակարգին համապատասխան, վիճակագրական հետազոտությունների կազմակերպում, մարդահամարների անցկացում 10 տարին մեկ, բիզնես - ռեգիստրի ստեղծում, վարում և արդիականացում, սպառողներին վիճակագրական տեղեկատվության տրամադրում, ամփոփ վիճակագրական տեղեկատվության թափանցիկության և մատչելիության ապահովում, համագործակցություն միջազգային կազմակերպությունների և ազգային վիճակագրական ծառայությունների հետ:

Հայաստանի վիճակագրություն

Աշխատակիցների տոկոսային բաշխվածությունը ըստ մասնագիտությունների (որակավորման), 2009թ.

Կոդ	Մասնագիտություն	Տոկոս
(1)	Տնտեսագետներ	50,0%
(2)	Չունի	20,0%
(3)	Մաթեմատիկոսներ	6,5%
(4)	Մանկավարժներ	7,3%
(5)	Այլ	11,1%
(6)	Չունի	5,1%

Հայաստանի վիճակագրություն

Անճակագրի քանակական բաշխվածությունը ըստ կրթական մակարդակի

Կրթական մակարդակ	Քանակ
Բարձրագույն	313
Այդ թվում՝ գիտական աստիճան և կոչում ունեցողներ	8
Միջին մասնագիտական	27
Միջնակարգ (լրիվ) ընդհանուր	20

Հայաստանի վիճակագրություն

Միջազգային համագործակցության համաձայնագրեր.

Վրդգստանի Հանրապետություն (ստորագրված՝ 21.04.97թ. վավերացված՝ 07.05.98թ.)
 Տաջիկիստանի Հանրապետություն (ստորագրված՝ 10.03.98թ. վավերացված՝ 20.09.99թ.)
 Ռուսաստանի Դաշնություն (ստորագրված՝ 14.05.99թ. վավերացված՝ 20.09.99թ.)
 Բուլղարիա (ստորագրված՝ 01.12.99թ., վավերացված՝ 08.03.2000թ.)
 Բելառուս (ստորագրված՝ 20.09.00թ., վավերացված՝ 28.12.2000թ.)


Փոխըմբռնման Հուշագիր Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև (ստորագրված՝ 02.10.1998թ.)

Համաձայնագիր Եվրոստատի և ՀՀ վիճակագրության միջև արտաքին առևտրին վերաբերող վիճակագրական տվյալների փոխանակման մասին (ստորագրված՝ 23.02.99թ., վավերացված՝ 20.09.99թ.)

Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության խորացման մասին (ստորագրված՝ 26.05.2000 թ.)

Հուշագիր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ազգային վիճակագրական ծառայությունների միջև համագործակցության հետագա խորացման մասին (ստորագրված՝ 15.10.2002 թ.)

Փոխըմբռնման Հուշագիր ՀՀ ԱՎԾ, ԱՊՀ միջպետական վիճակագրության կենտրոնի միջև ԱՊՀ տարածաշրջանում միջազգային համադրումների ծրագրի իրականացման մասին (ստորագրված՝ 17.12.2003թ.)



Հայաստանի վիճակագրություն

Ընթացիկ հետազոտություններ.

Պետական բյուջե


1. Հայաստանի Հանրապետության **տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն**
2. **Գյուղատնտեսության վիճակագրություն**
հացահատիկի բերքահավաքի որակի վերաբերյալ հետազոտություն

Ասիական զարգացման բանկի ֆինանսավորմամբ.

- աշխատանքի վիճակագրություն,
«Ոչ ֆորմալ հատվածի գնահատում»

«Հազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Հայաստան» ՊՈԱԿ-ի և ՀՀ ԱՎԾ միջև ստորագրված իրականացնող կազմակերպության պայմանագրի շրջանակում.


- «Կենսամակարդակի ամբողջացված հետազոտություն»



Հայաստանի վիճակագրություն

Վերջին առանցքային հրապարակումներն անգլերեն.

1. Վիճակագրական հրապարակումների համացանկ, 2009
2. ՀՀ վճարային հաշվեկշիռը, 2009
3. ՀՀ միջազգային ներդրումային և արտաքին պարտքի դիրքերը, 2009
4. ՀՀ արտաքին առևտուրը 2008 թվականին (դասակարգման 2-նիշ մակարդակ)
5. ՀՀ արտաքին առևտուրը 2008 թվականին (դասակարգման 4-նիշ մակարդակ)
6. ՀՀ արտաքին առևտուրը 2008 թվականին (դասակարգման 8-նիշ մակարդակ)
7. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2009
8. ՀՀ մարզերը թվերով, 2009
9. Հայաստանի Հանրապետության արդյունաբերությունը, 2009
10. Հայաստանի Հանրապետության տրանսպորտը և կապը, 2009
11. Հայաստանի ֆինանսների վիճակագրություն, 2009
12. Աշխատանքի շուկան Հայաստանի Հանրապետությունում, 2009
13. Շրջակա միջավայրը և բնական պաշարները ՀՀ-ում 2008 թվականին
14. Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, 2009
15. Հայաստանի կանայք և տղամարդիկ, 2009
16. Հայաստանը թվերով, 2009
17. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2009
18. Ազգային ամփոփ տվյալների էջ (Էլեկտրոնային), 19. Ատլաս «Հայաստանի Հանրապետությունը մարզերով» (Էլեկտրոնային),
20. Պարենային ապահովություն և աղքատություն,
21. Չեկույց աշխատուժը և ոչ ֆորմալ զբաղվածությունը Հայաստանում (ընտրանքային միանվագ հետազոտության արդյունքների վերաբերյալ)
22. Չեկույց առևտրի և բեռնափոխադրումներ իրականացնող կազմակերպություններում առևտրային և տրանսպորտային հավելյալ վերաբերյալ ընտրանքային միանվագ հետազոտության
23. Բնապահպանական ծախսերը Հայաստանի Հանրապետությունում 2007 թվականին
24. Չեկույց «Հայաստանում 2008թ. հոկտեմբերի 1-31-ը ժամանակի օգտագործման հետազոտության արդյունքները»
25. ՀՀ բնակչության ծերացման վերաբերյալ հետազոտության արդյունքների վերլուծություն (Էլեկտրոնային),



Հայաստանի վիճակագրություն

Միջազգային դասակարգումների օգտագործում.
NACE, ISCO-88, CPA, PRODCOM, HS/CN, COICOP

Միջազգային ստանդարտներ.

ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական խորհուրդը 2008թ.-ի ապրիլի 29-ին Հայաստանին ընտրել է Միավորված ազգերի կազմակերպության վիճակագրական հանձնաժողովի անդամ սկսած 2009թ. հունվարի 1-ից՝ չորս տարի ժամկետով: ՄԱԿ-ի վիճակագրական հանձնաժողովը բաղկացած է 24 անդամ երկրներից:

Հայաստանի Հանրապետությունը անդամակցում է Արժույթի միջազգային հիմնադրամի (ԱՄՀ) Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (SSՀՄ) 2003թ. նոյեմբերի 7-ից՝ դառնալով այդ ստանդարտին անդամագրվող 54-րդ երկիրը (2010թ. Փետրվարի դրությամբ ստանդարտին անդամագրված է 67 երկիր): Ստանդարտների և կոդերի պահպանման Հայաստանի վերաբերյալ վերջին զեկույցը (ROSC) տվյալների որակի գնահատման ձևաչափով հրապարակվել է ԱՄՀ պաշտոնական կայքէջում 2009թ. փետրվարին:

«...երկրները, որոնք մասնակցում են Տվյալների տարածման ընդհանուր համակարգին (ԱՄՀ ՏՏՀՀ), կարող են դիտարկվել որպես երկրներ, որոնք պարտավորություն են ստանձնում բարելավել համապատասխան վիճակագրական ցուցանիշների որակը, այն դեպքում, որ Տվյալների տարածման հատուկ ստանդարտին (ԱՄՀ ՏՏՀՄ) մասնակցող երկրները կարող են դիտարկվել որպես ավելի զարգացած վիճակագրական կարողություն ունեցողների համեմատ ՏՏՀՀ մասնակցող և ընդհանրապես համակարգին չմասնակցող երկրները:»

(Региональное развитие статистики в Азиатско-Тихоокеанском регионе, Записка Генерального Секретаря, пункт 37. ООН, Экономический и Социальный Совет, Статистическая комиссия, 40-ая сессия, 24-27 февраля 2009. документ E/CN.3/2009/15)




Հայաստանի վիճակագրություն

Վիճակագրական կարողությունների համաթիվ. Հայաստան
ըստ Համաշխարհային Բանկի (<http://www.worldbank.org/data/bbsc>)

The Bulletin Board on Statistical Capacity (BBSC)

The Bulletin Board on Statistical Capacity (BBSC), developed by the Development Data Group (DECDG), aims to improve measuring and monitoring of statistical capacity of IDA countries in close collaboration with countries and users. The database contains information on various aspects of national statistical systems and includes a country-level statistical capacity indicator based on a set of criteria consistent with international recommendations. To access Country Profiles, click [here](#).

**Statistical Capacity Indicator
Armenia**



Armenia is the highest scoring IDA country in 2009 and made significant progress in the last 10 years.



Հայաստանը 2009 թվականին Միջազգային զարգացման ընկերակցության երկրներից ունի ամենաբարձր համաթիվը և զգալի առաջընթաց է գրանցել վերջին 10 տարիներին:



Վիճակագրական կարողությունների համաթիվ
ամփոփ նկարագիր. Հայաստան



The World Bank

Statistical Capacity Indicator Summary Description
Armenia

[View detailed description](#)

2009 Statistical Capacity Indicator (on a scale of 0-100)		
Indicator	Armenia	All Countries**
Overall	92	65
Methodology	100	56
Source Data	80	63
Periodicity & Timeliness	95	77

Methodology (2009)	Status	Value	Weight	Score
National accounts base year	Annual chain linking or base year within last 10 years	1	10	10
Balance of payments manual in use	Using BPM5	1	10	10
External debt reporting status	Actual or preliminary	1	10	10
Consumer price index base year	Base year within last 10 years	1	10	10
Industrial production index	Available monthly/quarterly	1	10	10
Import and export price indexes	Available monthly/quarterly	1	10	10
Government finance accounting	Accounts consolidated	1	10	10
UNESCO reporting	At least 3 times in last 4 years	1	10	10
National immunization coverage	Consistent with WHO/UNICEF	1	10	10
Special Data Dissemination Standard	Subscribes	1	10	10
TOTAL Methodology (All Countries=56)				100
Source Data (2009)	Status	Value	Weight	Score
Population census	Periodicity of 10 years or less	1	20	20
Agricultural census	Periodicity longer than 10 years	0	20	0
Poverty survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Health survey	Periodicity of 3 years or less	1	20	20
Vital registration system coverage	Complete	1	20	20
TOTAL Source Data (All Countries=63)				80
Periodicity & Timeliness (2009)	Status	Value	Weight	Score
Income poverty	Periodicity of 3 years or less	1	10	10
Child malnutrition	Periodicity of 3 years or less	1	10	10
Child mortality	National/international estimate is available for reference years	1	10	10
Immunization	Periodicity of 1 year	1	10	10
HIV/AIDS	National/international estimate is available for reference years	1	10	10
Maternal health	Periodicity of 3 years or less	1	10	10
Gender equality	Indicator observed for at least 5 out of 5 latest years	1	10	10
Primary completion	Indicator observed for 5 out of 5 latest years	1	10	10
Access to water	Indicator observed for 1 out of 6 latest years	0.5	10	5
Per capita GDP growth	Periodicity of 1 year	1	10	10
TOTAL Periodicity & Timeliness (All Countries=77)				95



** All countries include low- and middle-income IDA/IBRD countries with a population of over 1 million.





© 2009 The World Bank Group. All Rights Reserved.

<http://ddp-ext.worldbank.org/ext/CSIDB/getCountryStatInfoXML?id=51&format=CSIDBSCORE3>

Ըստ Համաշխարհային Բանկի վիճակագրական կարողությունների համաթվի, Հայաստանի ընդհանուր ցուցանիշը կազմում է 92, որի հիմքում են ընկած մեթոդաբանություն՝ 100, տվյալների աղբյուրներ՝ 80, պարբերականություն՝ 95:







Հայաստանի վիճակագրություն

Մարդահամար

Հայաստանի Հանրապետությունում առաջին ազգային մարդահամարն անց է կացվել 2001թ. հոկտեմբերի 10-ից -19-ը

Մշտական բնակչություն - 3 213 011,

որից

քաղաքային - 2 066 153

գյուղական - 1 146 858


տղամարդիկ - 1 541 999

կանայք - 1 671 012

Առկա բնակչություն - 3 002 594

«Հայաստանի Հանրապետության 2001թ. մարդահամարի արդյունքները» ըստ հանրապետության, ք.Երևանի և առանձին մարզերի ցուցանիշներով հրապարակումները (թվով 12), հայերեն, ռուսերեն և անգլերեն

Ինտերնետ: <http://www.armstat.am> , <http://www.armstat.info> (հայելային կայքէջ)



Հայաստանի վիճակագրություն

Գրադարան

ՀՀ ԱՎԾ-ում գործում է բաց գրադարան, որտեղ առկա են ՀՀ ԱՎԾ բոլոր վիճակագրական արտադրանքները, այլ երկրների և միջազգային կազմակերպությունների վիճակագրական հրապարակումները, մեթոդաբանական ձեռնարկներ և դասագրքեր, վիճակագրության ոլորտը կարգավորող ազգային և վերազգային իրավական բնույթի փաստաթղթեր և այլն:

Երկուշաբթի - Ուրբաթ - 9.⁰⁰ - 18.⁰⁰

Հեռախոս: (+ 37410) 52 33 56, 52 43 03

Ինտերնետ: <http://www.armstat.am> , <http://www.armstat.info> (հայելային կայքէջ)

Հասցեն: Հայաստանի Հանրապետություն,
Երևան, 0010, Հանրապետության
պողոտա, Կառավարական շենք 3,
ՀՀ ազգային վիճակագրական
ծառայություն, 731 սեն.